— Թէեւ մեր վսեմաշուք փաշան կը տայ ձեր հարկաւորուած թղթերը, եւ դուք, պարոն բժշկապետ, ամէն տեղ կը գտնէք մեծ պատրաստականութիւն ձեր ճանապարհորդութիւնը անվտանգ կացուցանելու համար, բայց այսոամենայնիւ, ես խորհուրդ կը տայի ձեզ քարաւանի հետ գնալ:

— Ես այդպիսի նպատակ էլ ունեմ, — պատասխանեց Ասլանը, — ինձ ասացին, որ էգուց երեկոյեան մի քարաւան է դուրս գալու:

— Այդ ո՞ւմ քարաւաննն է, — հարցրեց փաշան:

— Չգիտեմ, — պատասխանեց Ասլանը:

— Թոխմախ-Արթինի քարաւանն է, — մէջ մտաւ ոստիկանապետը:

— Հա, Թոխմախ-Արթինը շատ քաջ մարդ է, նրա քարաւանը ամենաապահովն է ճանապարհորդութեան համար: Բայց չգիտեմ, պարոն բժշկապետ, դուք չէի՞ք ձանձրանայ քարաւանի հետ գնալով, որովհետեւ քարաւանը սաստիկ դանդաղ է գնում, — հարցրեց փաշան:

— Այդ իրաւ է — պատասխանեց Ասլանը, — բայց որքան էլ ցանկանայի, չէի կարող շտապով անցնել, որովհետեւ ինձ հետ տանում եմ բաւական ծանրութիւններ, որոնք մի քանի բեռնէր կը լինեն, իմ շարժական դեղարանը, իմ գործիքները եւ այն բոլոր հնութիւնները, որ հաւաքել եմ: Բացի դրանցից, ինձ հարկաւոր է մի քանի նշանաւոր տեղեր հետազօտել. քարաւանի դանդաղ ընթացքը կը նպաստէր ինձ՝ ցանկացած ժամանակ շեղուել ճանապարհից՝ այդ տեղերը տեսնելու համար:

— Միայն, երբ քարաւանից բաժանուելու լինէք, անպատճառ հարկաւոր է, որ ձեզ հետ ձիաւորներ վերառնէք, — խորհուրդ տուեց առաջորդը:

— Այդ ես գիտեմ, սրբազան հայր, ես բաւական փորձուած եմ ասիական ճանապարհորդութիւնների մէջ: Թէեւ այս կողմերում չեմ եղել, բայց Միջին Ասիայում շատ եմ թափառել:

Վերջապէս ընթրիքը տուեցին: Գորգերի վրայ տարածուեցաւ սեղանի գունաւոր սփռոցը, եւ կերակուրները, որքան պատրաստուած էին, պղնձեայ բոլորակ սինիների վրայ դասաւորած, միանգամից ներս բերուեցան: Նրանք բազմատեսակ էին: Բազմատեսակ էին եւ քաղցր շերբեթները, զանազան համեմներով եւ զանազան գոյներով: Ոգելից ըմպելիքները, գինի, արաղ, դրուեցան միայն առաջնորդի, Ասլանի եւ երեք հայ երեւելիների մօտ: Միւսները շերբեթ էին խմում: Չինէական գեղեցիկ ամանները մի առանձին ախորժակ էին բաց անում: Նախկին վիճաբանութիւնները դադարեցան, որովհետեւ այստեղ, ինչպէս առհասարակ արեւելքում, սեղանի վրայ շատ չեն խօսում: Տիրում էր կատարեալ լռութիւն, որովհետեւ դանակ եւ պատառաքաղ